նորա հետ. գալով Համազին, նա պատերազմեցաւ բնակիչների հետ եւ սպանեց մեծ բազմութիւն։

109 Թ. Մասլամայ ի. Աբդուլմալիք յարձակեցաւ Թուրքաց վերայ, խլեց նոցանից Ալանաց դուռը եւ ճակատեցաւ խաքանի հետ։

111 Թ. Թուրքերը արշաւեցին Ատրպատական, ուր Հարազ ի. Ամբ Թայ պատերազմեցաւ նոցա հետ եւ հալածեց նոցա։

112 Թ. Թուրքերը արշաւեցին Արտաւիլ. Ջառռահ ի. Աբդուլլահ դիմաւորեց նոցա եւ կռուի մէջ սպանեցաւ Թուրքաց իշխանից։

117 Թ. Մրբուան ի. Մուհամմեդ ասպատակեց Թուրքաց երկիրը, իսկ 122 Թ. արշաւեց Հայաստան։ 123 Թ. ասպատակեց Հայաստանի Ջիլան եւ Մուղան գաւառները.

126 Թ. Մրբուան հեռացաւ Հայաստանից, նշանակելով երկրի վերայ կառավարիչ Ասիմ ի. Աբդուլլահ ի. Եզիդ Հալալիին, իսկ Բաբ-էլ-աբաբի վերայ՝ Խահակ ի. Մուսլիմ Օքայլին։ Ապա ամբողջ Հայաստան անցաւ Խահակ ի. Մուսլիմի ձեռքը։

127 Թ. Մրբուան լուր ստացաւ, որ Զոհակ ի. Քէյս Հարուրի տիրել է Իրակին. այստեղից նա անցաւ Միջագետք, եկաւ Մոսուլ, ապա Մծբին, որտեղ էր Աբդուլլահ ի. Մրբուան, եւ պաշարեց քաղաքը։ Մուսաֆիր, Խահակ ի. Մուսլիմի Բաբի վերայ դրած օգնականն, համախոհ էր ապստամբներին. Զոհակ դաշն կապեց նորա հետ Հայաստանի վերաբերմամբ, որի բնակիչք սպանել էին երկրի կառավարիչ Ասիմ ի. Աբդուլլահ ի. Եզիդ Հալալիին, եւ ուղարկեց նորան այնտեղ։

133 Թ. Աբու Աբբաս գրեց Մուհամմեդ ի. Սուլին կառավարիչ Հայաստանի վերայ. որ բազմաթիւ զօրքով գնաց այնտեղ։ Մուսաֆիրի. Կպզիր տիրում էր ամբողջ երկրի վերայ, փոխանակելով Խահակ ի. Մուսլիմ Օքայլին, Մրբուանի օգնականին. Մուհամմեդ ի. Սուլ պատերազմեցաւ նորա